

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը բուժաշխատողի մասնագիտական տոնի առթիվ

Հարգելի բուժաշխատողներ

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ: Այս տոնը իրավամբ բարի ավանդույթ է դարձել մեզանում և հնարավորություն է տալիս արժևորել բուժաշխատողի դերն ու նշանակությունը:

Բոլոր ժամանակներում մեր ժողովուրդը խորին հարգանքով ու ակնածանքով է վերաբերվել բժշկի մասնագիտությանը:

Սիրելի բուժաշխատողներ, հավատարիմ մնալով Հիպոկրատի ձեր երդմանը, դուք միշտ արժանիորեն եք կատարել ձեր աշխատանքը, խորապես համոզված լինելով, որ հենց դրանից է մեծապես կախված կյանքում ամենակարևորը՝ մարդու առողջությունը:

Այսօր էլ մեր ուշադրության կենտրոնում է առողջապահության համակարգը, և մենք անում ենք հնարավորը՝ լուծելու ոլորտում առկա հիմնախնդիրները, ստեղծելու ժամանակակից պայմաններ՝ բնակչության բուժսպասարկումը պատշաճ մակարդակով ապահովելու համար:

Կրկին շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ և մաղթում քաջառողջություն, երջանկություն ու նորանոր նվաճումներ ձեր չափազանց բարդ ու պատասխանատու աշխատանքում:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 **Ս. Խաչատրյան**

21 հունիս 2012 թ.